✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (VII դասարան)

**ՀԱՐԳԵԼԻ ՛ ԴԻՄՈՐԴ**

**Ընդունելության թեստը բաղկացած է *10* առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է *5* միավոր** (ընդամենը՝ 50 միավոր):

**Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների*:***

**Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է *60* րոպե*:***

**ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ**

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1. Լրացնել բաց թողած տառերը:**

Ակ__նթարթ, արևազ__ծ, երբևից__, հոգ__իճակ, նր__աճաշակ, մր__ատու, ար__նանալ, հինավուր__, աշխար__ասփյուռ, տա__տակամած:

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Տրված բառերն ըստ անհրաժեշտության գրել միասին, անջատ կամ գծիկով:**

Օր (օրի), տասն (ինը), հարյուր (ինը), ամենա (մեծ), դեփ (դեղին), մուգ (դեղին), մանր (մունր), ի (հարկե), գյուղից (գյուղ), մայր (ու) (որդի):

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

______________________________________________________________________________

_________________________

**ԱՌԱՋԱԴՐԱՆ Ք 3. Տրված արմատները միացնելով՝ կազմել 5 բառ:**

Տոհմ գույն
դարչին թիռ
բույժ քույր
ուղիղ կաթսա
շոգի ծառ

_______________________________________________

_______________________________________________

_________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Առաջին շարքի նախածանցներով և երկրորդ շարքի համապատասխան արմատներով կազմել ածանցավոր բառեր:**

Ներ թվային
տար անուն
դժ դրամարկղ
մակ բախտ
ան կայան

_______________________________________________

_______________________________________________

_________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Ընտրել և յուրաքանչյուր դարձվածքի դիմաց գրել համապատասխան իմաստը:**

Թև առնել թեթևակի ծանոթանալ
ջրի գին նախկին թշվառ վիճակի մեջ ընկնել, ունեցածը կորցնել
աչքի անցկացնել անելանելի դրության մեջ լինել
կոտրած տաշտակի առաջ կանգնել ոգևորվել, ոգեշնչվել
կրակն ընկնել էժան

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_______________________________________________

_____________________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Առաջին շարքի արմատներով և երկրորդ շարքի համապատասխան վերջածանցներով կազմել ածանցավոր բառեր:**

Այգի ենի
գույն վոր
ականջօղ ակ
հիվանդանալ պան
մասուր ոտ

_______________________________________________

_______________________________________________

_________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ընդգծել այն բառը, որն արտահայտում է փակագծերում տրված բառի փոխաբերական իմաստը:**
ա/ (փիղ) –երկարավիզ, հսկա, անշնորհք, հեզ

բ/ (կրիա) –դանդաղաշարժ, խելացի, այլանդակ, անշնորհակալ

գ/ (արև) – լույս, ջերմություն, կյանք, ցերեկ

դ/ (կրակի կտոր) – անպաշտպան, գազանաբարո, խաղաղ, աշխույժ

ե/ (գառ) –հեզ, աշխատասեր, բացսիրտ, անտաշ

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Կապակցությունների իմաստը արտահայտել մեկ բառով:**
ա/ թռչուն որսացող ________________________________

բ/ հաց թխող ________________________________

գ/ նրբորեն հյուսված ________________________________

դ/ քուն բերող ________________________________

ե/ երկնքի կամար ________________________________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Տրված իմաստների դիմաց գրել համանուն բառեր:**
ա/ հոր հայր___________________
կաթոլիկ եկեղեցու գերագույն առաջնորդ _________________________

բ/ դաշույն, թուր__________________
սրածայր, հատու_____________________

գ/ հարգ, պատիվ __________________
բանկից վերցված գումար____________________

դ/ քարանձավ_________________________
տղամարդ__________________________

ե/ խոճկոր ___________________________________________________
հիվանդություն /հարականջային գեղձի բորբոքում/ ______________________________

**ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Տեղադրել <u>ինչ-որ, սաղարթների, վաղորդյան, լեփ-լեցուն, դյութիչ,</u> բառերը համապատասխան նախադասության մեջ` պահպանելով տրամաբանությունը:**

1. Գեղանկարիչը ձգտում է մեր առջև բանալ կյանքի __________________ պատկերները:
2. Տղայի դեմքը լուսավորված է __________________ արևով:
3. Եթե օրվա վերջում գիտեք այնքան, որքան օրվա սկզբում, նշանակում է` __________________ բան սխալ եք անում:

4. Խարույկի կապտագույն ծուխը բարձրացավ ընկուզենու ____________________ միջով:
5. Փողոցները ____________________ էին խառնիճաղանջ ամբոխով: